



ԳՐԵՏԱՌ ԱՐՁՈՒՄԱՆՅԱՆ

ԼՂՀ Գերագույն դատարանի դատավոր,
իրավաբանական գիրուրյունների քեկնածու,
ԼՂՀ վասպակավոր իրավաբան

ՀԱՅՑԱՅԻՆ ՊԱՀԱՆՁՆԵՐԻ ՍԱՀՄԱՆՆԵՐԻՑ ԴՈՒՐՍ ԳՎԼՈՒ ԴԱՏԱՐԱՆԻ ԻՐԱՎՈՒՆՔԸ



Դատական քննության ու գործի լուծման սահմաններն ուղղակիորեն նախատեսող նորմ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության քաղաքացիական դատավարության օրենսգիրը /այսուհետ՝ ՔԴՕ/ չի պարունակում, սակայն դատական պրակտիկայում համարվում է, որ դատարանը հայցային գործը պարտավոր է քննել և լուծել հայցի առարկայի ու հայցի հիմքի սահմաններում։ Նշված եզրահանգումը բխում է ՔԴՕ համապատասխան հոդվածների համադրված վերլուծությունից։

Այսպես, օրինակ, «Քաղաքացիական գործի հարուցման հիմքը» վերտառությամբ ՔԴՕ 3-րդ հոդվածի համաձայն՝ դատարանը քաղաքացիական գործը հարուցման է միայն հայցի կամ դիմումի հիման վրա։ «Վճիռ կայացնելիս լուծման ենթակա հարցերը» վերտառությամբ ՔԴՕ 122-րդ հոդվածի 4-րդ կե-

տի համաձայն՝ դատարանը վճիռ կայացնելիս որոշում է հայցը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ այն մերժելու հարցը։ «Վճիռի բովանդակությունը» վերտառությամբ ՔԴՕ 123-րդ հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետի համաձայն՝ վճոփ նկարագրական մասը պետք է պարունակի հայցադիմումի հակիրճ բովանդակությունը՝ յուրաքանչյուր պահանջի հիմքում դրված փաստերը՝ շարադրելով այն փաստերը, որոնց վրա հիմնվում է հայցվորը, յուրաքանչյուր պահանջի իրավական հիմքերն ու հիմնավորումները՝ վկայակոչելով օրենքների և այլ իրավական ակտերի նորմերը, 4-րդ մասի 6-րդ կետի համաձայն՝ վճոփ պատճառաբանական մասը պետք է պարունակի եզրահանգում՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիմնավորվածության վերաբերյալ, 5-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ վճոփ եզրափակիչ մասը պետք է պարունակի յուրաքանչյուր պահանջը լրիվ կամ մասնակի բավարարելու կամ մերժելու կամ գործի վարույթը կարմելու մասին դատարանի եզրակացությունը։

Ինչպես հայտնի է, մինչև քաղաքացիական դատավարության հայցային վարույթ հարուցելը կոնկրետ գործով օրյեկտիվ իրականության մեջ առկա են լինում՝ 1/օրյեկտիվ իրավունքի նորմերը, 2/իրավաբանական փաստերը, որոնց հետ օրյեկտիվ իրավունքի նորմերը կապում են նյութական իրավահարաբերությունների ծագումը, փոփոխումը, դադարումը և պաշտպանությունը, 3/ֆիզիկական և իրավաբանական անձանց սուբյեկտիվ քաղաքացիական իրավունքները, ազատությունները, օրինական շահերը և



ՀՂՀ դատական իշխանություն

պարտականությունները /իրավահարաբերությունները/:

Հայց հարուցելով դատարան, հայցաղիմումում ներկայացնելով հայցի հիմքը և առարկան՝ հայցվորը ճատնանշում է իր խախտված կամ վիճարկվող իրավունքը, ազատությունը և օրինական շահը, որի վերաբերյալ ծագել է վեճ իր և պատասխանողի միջև: Հայցվորը հետապնդում է իր իրավունքները, ազատությունները և օրինական շահերը պաշտպանելու նպատակ՝ իրավական վեճն իր օգտին լուծելու ճանապարհով: Պատասխանողը, պաշտպանվելով հայցից, համապատասխանաբար, ձգուում է, որ կայացվի հարուցված հայցը մերժելու մասին վեճը: Հայցային վարույթում դատարանի խնդիրները կայանում են նրանում, որպեսզի՝ 1/արժանահավատ ապացույցներ ծենքը բերվեն հայցի և պատասխանողի առարկությունների հիմքում ընկած իրավաբանական փաստերի առկայության կամ բացակայության, վիճո՞ն կողմերի իրավահարաբերությունների, պատասխանողի կողմից հայցվորի իրավունքները, ազատությունները, օրինական շահերը խախտելու կամ վիճարկելու, այդ խախտման մեջ պատասխանողի ունեցած մեղքի առկայության մասին, ինչն իրականացվում է դատական քննության կենտրոնական մաս կազմող դատական ապացուցման միջոցով, 2/հաստատված /ապացուցված/ իրավաբանական փաստերի նկատմամբ վերջնականացես որոշի տվյալ գործով կիրառման ենթակա նյութաբավական նորմը /նորմերը/ և որոշի հայցը բավարարելու կամ այն մերժելու հարցը /իրիվ կամ մասնակի/: Այսինքն՝ դատավարության արդյունք հանդիսացող վճռի կայացմամբ հասնի հարուցված հայցի ու դատավարության իմանական նպատակին, այն է՝ գործի լուծմանը և գործին մասնակցող անձանց իրավունքների և օրինական շահերի պաշտպանությանը:

Ապացուցման պրոցեսում հատկապես կարևորվում է ապացուցման առարկայի՝ վեճի լուծման համար էական նշանակություն

ունեցող իրավաբանական /իմանականում՝ նյութաբավական քննութիւնի/ փաստերի ճիշտության հարցը, քանի որ դատարանի կողմից ապացուցման առարկայի սահմանների կամայական /ոչ իրավաչափ/ սահմանափակումը կամ ընդարձակումը կարող է հանգեցնել գործի սխալ լուծման: Գրականության մեջ և դատական պրակտիկայում ապացուցման առարկան դիտարկվում է հենց հայցի հիմքի և հայցի առարկայի մասին ուսմունքի համատերսում: ՔԴՕ 44-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գործի լուծման համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարան՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա: Դա դատավարական ընդհանուր կանոն է: Սակայն յուրաքանչյուր գործ ունի իր առանձնահատկությունները, որոնք բխում են ներկայացված հայցից ու հայցի դեմ առարկություններից, որտեղ շարադրվում են տվյալ գործով ապացուցման ենթակա կոնկրետ փաստերը: Դրա համար էլ դատավարագիտության մեջ և դատական պրակտիկայում համարվում է, որ քաղաքացիական հայցային գործերով ապացուցման առարկան կազմավորվում է երկու աղյութներից՝ 1/հայցի հիմքի և դրա դեմ բերվող առարկությունների հիմքի փաստերից, 2/կիրառման ենթակա նյութաբավական իրավունքի նորմի /նորմերի/ հիպորեգում և դիսպոզիցիալում նախատեսված փաստերից¹:

Դատական ակտը ոչ իրավաչափ է ճանաչվում հայցի հիմքի բոլոր փաստերին և բոլոր հայցապահանջներին չանդրադառնալու, ինչպես նաև հայցի հիմքի ու առարկայի սահմաններից դուրս գալու և չներկայացված պահանջներ լուծելու դեպքերում, որպիսի պայմաններում խախտվում են օրինականության, տնօրինչականության, մրցակցության սկզբունքները, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով, ինչպես նաև Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին մասով երաշխավորված անձի իրավունքների



և ազատությունների դատական պաշտպանության իրավունքի արդյունավետ և լիարժեք իրականացումը²:

Միևնույն ժամանակ, գործող օրենսդրությամբ նախատեսված դեպքերում դատարանն իրավունք ունի, իսկ որոշ դեպքերում՝ նաև պարտավոր է դուրս գալու ներկայացված հայցապահների սահմաններից և լուծելու ներկայացված պահանջների հետ սերտորեն կապված, սակայն չներկայացված պահանջներ:

Այսպես, ՔԴՕ 123-րդ հոդվածի 5-րդ մասի 3-րդ կետի համաձայն՝ գործարքն անվավեր ճանաչելու դեպքում վճռի եզրափակիչ մասը պետք է պարունակի նշում՝ գործարքի անվավերության հետևանքների մասին:

Դատարանի նախաձեռնությամբ հայցի սահմաններից դուրս գալու մնացած դեպքերը նախատեսված են նյութական օրենսդրությամբ³:

Այսպես, օրինակ, ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 303-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ առողջին գործարքի անվավերության հետևանքների կիրառման մասին պահանջ կարող է ներկայացնել ցանկացած շահազգիր անձ: Դատարանն իրավունք ունի այդպիսի հետևանքներ կիրառել սեփական նախաձեռնությամբ:

Կամ՝ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի⁴ 313-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն, եթե գործարքն անվավեր է ճանաչվել խարեւության, բռնության, սպառնալիքի ազդեցության ներքո, մեկ կողմի ներկայացուցչի՝ մյուս կողմի հետ շարամիտ համաձայնությամբ կամ ծանր հանգամանքների բերումով, ապա մյուս կողմը տուժողին վերադարձնում է գործարքով իր աճրող ստացածը, իսկ բնեղենով վերադարձնելու անհնարինության դեպքում դրա արժեքը հատուցում է դրամով: Գործարքով մյուս կողմից տուժողի ստացած գույքը, ինչպես նաև մյուս կողմից նրան հասանելիքը բռնագանձվում է հօգուտ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության: Գույքը բնեղենով պետությանը հանձնելու անհնարինության

դեպքում դրա արժեքը բռնագանձվում է դրամով: Բացի դրանից մյուս կողմը տուժողին հատուցում է նրան պատճառած իրական վճարը:

Կամ՝ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 198-րդ հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ բաժնային սեփականության մասնակցին բնեղենով առանձնացվող գույքի անհամաշավությունը բաժնային սեփականության իրավունքում նրա բաժնին վերացվում է նրան համապատասխան դրամական գումար վճարելով կամ այլ փոխհատուցումով: Բաժնային սեփականության մասնակցի բաժնը բնեղենով առանձնացվող գույքը սեփականության մասնակցի համաձայնությամբ նրան փոխհատուցում տալ: Այն դեպքերում, եթե սեփականատիրոջ բաժնն աննշան է, չի կարող իրապես առանձնացվել և ընդհանուր գույքի օգտագործման մեջ այդ սեփականատերն էական շահ չունի, դատարանը կարող է նաև այդ սեփականատիրոջ /հայցվորի/ համաձայնության բացակայության դեպքում բաժնային սեփականության մյուս մասնակցներին բույլատրել վճարելու փոխհատուցում:

Կամ՝ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածի համաձայն՝ եթե վճարման ենթակա տուժանքն ակնհայտորեն անհամաշափ է պարտավորության խախտման հետևանքներին, դատարանն իրավունք ունի պակասեցնել այն:

Կամ՝ ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 1237-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դատարանը, ժառանգին ճանաչելով ժառանգությունն ընդունած, լուծում է դրամից բխող ժառանգական գույքի նկատմամբ մյուս ժառանգների իրավունքներին վերաբերող հարցերը, ինչպես նաև անվավեր է ճանաչում նախկինություն սրբած ժառանգության իրավունքի վկայագիրը:

Կամ՝ ԼՂՀ աշխատանքային օրենսգրքի 265-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական պատճառներով կամ գործառուի և



ԼՂՀ դատական իշխանություն

աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինության դեպքում դատարանը կարող է աշխատողին չվերականգնել իր նախկին աշխատանքում՝ պարտավորեցնելով գործատուին հարկադիր պարապուրող ամբողջ ժամանակահատվածի համար վճարել հատուցում՝ միջին աշխատավարձի շափով, մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, և աշխատողին աշխատանքում չվերականգնելով դիմաց հատուցում՝ ոչ պակաս, քան միջին աշխատավարձի, քայլ ոչ ավելի, քան միջին աշխատավարձի տասներկուապատիկի շափով:

Կամ՝ ԼՂՀ ընտանելկան օրենսգրքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին և 2-րդ կետերի համաձայն՝ ամուսինների միջև համաձայնության բացակայության դեպքում դատարանը պարտավոր է՝ 1) որոշել, թե ամուսնալուծությունից հետո ծնողներից ում հետ պետք է ապրեն երեխանները, 2) որոշել, թե որ ծնողից և ինչ չափով պետք է ալիմենտ (ապրուստավճար) բռնագանձվի:

Կամ՝ ԼՂՀ ընտանելկան օրենսգրքի 63-րդ հոդվածի 2-րդ մասում նախատեսված է, որ ծնողական իրավունքների սահմանափակում բույլատրվում է նաև այն դեպքերում, երբ թեև երեխային ծնողների կամ նրանցից մեկի մոտ բողնելը վերջիններիս վարքագծի հետևանքով վտանգավոր է երեխայի համար, սակայն բավարար հիմքեր չկան ծնողներին կամ նրանցից մեկին ծնողական իրավունքներից զրկելու համար:

Վերոնշված բոլոր դեպքերում գործնականում խոսք գտնում է դատարանի՝ իր նախաձեռնությամբ հայցային պահանջների /հայցի առարկայի/ շրջանակներից դուրս գալու և ներկայացված պահանջների հետ սերտորեն կապված, սակայն չներկայացված պահանջները քննելու ու լուծելու դատարանի իրավունքի մասին, որը, ի տարբերություն նախկին ՀԴՌՕ-ի, գործող ՀԴՌՕ-ն չի նախատեսում, ինչը մեկ անգամ ևս վկայում է նյութական օրենսդրության մեջ պարունակվող

դատավարական նորմերի ու ՀԴՌՕ-ի նորմերի անհամաձայնության՝ հայրենական օրենսդրության մեջ առկա հիմնախնդրի մասին։ Նյութափրավական նորմերի իրացման դատավարական կառուցակարգի բացակայությունը իրավակիրաց պրակտիկայում որոշակի դժվարություններ է առաջացնում։ բոլոր դեպքերում անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես ՀԴՌՕ-ում նախատեսված ընդհանուր դատավարական կանոնները, այնպես էլ նյութափրավական կանոնները։ Դատարանի կողմից հայցվորի ներկայացրած պահանջի հետ սերտորեն կապված, սակայն չներկայացված պահանջների լուծումը համարվում է տնօրինչականության սկզբունքից բացառություն և բույլատրվում է օրենքով նախատեսված դեպքերում։

Ինչ վերաբերում է դատարանի նախաձեռնությամբ հայցի հիմքի շրջանակներից դուրս գալուն, ապա այլ հարցը դատավարագիտության մեջ վիճելի է։ Հայրենական գործող օրենսդրությունը նման իրավունք դատարանին չի վերապահում։ դատարանն իրավունք չունի իր նախաձեռնությամբ դուրս գալու հայցի հիմքի շրջանակներից, հետազոտություն ու գնահատում է միայն այն ապացույցները, որոնք նշանակություն ունեն գործի լուծման համար։ Պահպանելով իր վարույթում գտնվող գործի շրջանակներում չեղոր դիրք՝ դատարանն իրավասու չէ ոչ միայն վիտիխնելու հայցի հիմքը, այլև քննարկելու կողմերի պահանջների և առարկությունների հիմքում դրված փաստերը փոփոխելու անհրաժեշտության հարցը։ Ըստս դատավարագետ Գ.Լ.Օսկինայի կարծիքով՝ Ըստսաստանի Դաշնության քաղաքացիական դատավարության օրենսգիրքը նման իրավունք դատարանին տալիս է, և այն բխում է այդ օրենսգրքի 56-րդ հոդվածի 2-րդ մասից, համաձայն որի՝ դատարանը որոշում է, թե գործի համար ո՞ր հանգամանքներն ունեն նշանակություն, ո՞ր կողմին է անհրաժեշտ դրանք ներկայացնել, այդ հանգամանքները դնում է քննարկման,



եթե նույնիսկ կողմերը դրանցից ոչ մեկի վրա չեն հենվում⁶: Հարկ է նկատել, որ այս հարցում հայրենական օրենսդրության կարգավորումը տարրերվում է. ՔԴՕ 44-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործին մասնակցող յուրաքանչյուր անձ պետք է ապացուի իր վկայակոչած փաստերը, իսկ 2-րդ մասի համաձայն՝ գործին լուծաբան համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերը որոշում է դատարանը՝ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա:

Ինչպես արդեն նշվել է, յուրաքանչյուր գործով ապացուցման առարկան ձևավորվում է հայցի ու դրա դեմ բերվող առարկությունների հիմքում ընկած փաստերից, ինչպես նաև վիճելի իրավահարաբերությունը կարգավորող իրավանորմում մատնանշված փաստերից: Դրանց միջոցով է դատարանը վերջնականապես որոշում, թե տվյալ գործով որ փաստի /փաստերի/ հաստատված կամ չհաստատված լինելն է հիմք հանդիսանում այդ փաստի /փաստերի/ նկատմամբ նյութաիրավական համապատասխան նորմերը կիրառելու և հայցը բավարարելու կամ մերժելու համար /լրիվ կամ մասնակի/:

Անդրադառնալով ապացուցման առարկան որոշելու՝ ՀՀ ՔԴՕ 48-րդ հոդվածի 2-րդ մասով /համապատասխանում է ԼՂՀ ՔԴՕ 44-րդ հոդվածի 2-րդ մասին/ դատարանին տրված իրավասության սահմանադրավականության հարցին՝ ՀՀ Սահմանադրավական դատարանն արտահայտել է այն իրավական դիրքորոշումը, որ ՀՀ ՔԴՕ 48-րդ հոդվածի 2-րդ մասի՝ «գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիման վրա» բառակազմակցության պայմաններում դատարանը չի կարող առաջ բաշել ապացուցման ենթակա այնպիսի նոր հանգամանք կամ փաստ, որն ընկած չէ գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիմքում: ՀՀ Սահմանադրավական դատարանը նաև նշել է, որ «Օրենսգրքի վիճարկվող դրույթն իր վերոհիշյալ բառակազմակցու-

թյամբ կաշկանդում է դատարանին գործին մասնակցող անձանց ներկայացրած պահանջների և առարկությունների շրջանակով, ինչի արդյունքում երաշխավորվում է մրցավցության սկզբունքի պահպանումը և բացառվում է այս տեսանկյունից դատարանի հնարավոր կամայականությունը» /տե՛ս քաղաքացի Նարին Սահմանադրության հիմնարկի հիման վրա՝ ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ գործով ՀՀ Սահմանադրավական դատարանի ՍԴՕ-845 08.12.2009թ. որոշումը/: Նոյն որոշման 7-րդ կետում ՀՀ Սահմանադրավական դատարանն ընդգծել է, որ գործի լուծաբան համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի որոշումը դատարանի կողմից ամենաին էլ չի նշանակում կողմերի իրավահավասարության կամ մրցակցության սկզբունքների խախտում, առավել ևս՝ կողմերի միջև ապացուցման պարտականության անհավասար բաշխում: Ընդհակառակը, դրանով դատարանը կողմերին ուղղորդում է ապացույցներ ներկայացնել այն փաստերի վերաբերյալ, որոնք կիաստատեն նրանց պահանջներն ու առարկությունները, հետևաբար, փաստական հիմք կատեղծեն գործով օրինական /հիմնավոր/ վեճու և որոշում/ կայացնելու համար⁷: Նոյն որոշման 8-րդ կետում ՀՀ Սահմանադրավական դատարանը նաև ընդգծել է, որ բոլոր այն դեպքերում, եթե դատարանն իր ներքին հանողմամբ գտնում է, որ կողմերի ներկայացրած ապացույցներն անհրաժեշտ չեն գործի լուծաբան համար էական նշանակություն ունեցող փաստերը պարզելու համար կամ դրանք ուղղված են այնպիսի փաստերի ապացուցմանը, որոնք շեղվում են գործից և առնչություն չունեն վերջինիս հետ, կամ ներկայացրած են տվյալ գործի քննության համար օրենքով չնախատեսված ապացույցներ, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 48-րդ հոդվածի 2-րդ մասի վի-



ԼՂՀ դատական իշխանություն

ճարկվող բառակապակցության ուժով դատարանին հնարավորություն է ընձեռվում դուրս թողնել դրանք ապացուցման առարկայի շրջանակներից: Դատարանին վերապահված՝ վերը նշված իրավասությունն իրավաչափ է և բխում է արդար դատարնենության իրավունքի, ինչպես նաև դրա բաղադրատարրը հանդիսացող ողջամիտ ժամկետներում գործի քննության իրավունքի էությունից:

Գրականության մեջ իրավացիորեն նշվել է, որ գործը լուծելու համար էական նշանակություն ունեցող ապացուցման ենթակա փաստերի որոշումը չի կարող նույնացվել հայցի հիմքի փոփոխման հետ: Ապացուցման առարկան և հայցի ու առարկությունների հիմքերն իրենց էությամբ, բովանդակությամբ, իրավաբանական նշանակությամբ տարբեր կատեգորիաներ են⁸:

Ապացուցման առարկան վերջնականութեն որոշելու դատավարական գործողության շրջանակներում դատարանը, հիմք ընդունելով հայցի հիմքում ու պատասխանողի առարկությունների հիմքում դրված փաստերը, ինչպես նաև կիրառման ենթակա նյութաիրավական նորմի /նորմերի/ հիմքորենում և դիսպոզիցիայում նախատեսված փաստերը, իրավասու է ծցգրտելու հայցի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերի շրջանակը՝ հայցադրումում վկայակոչվածի համեմատ այդ շրջանակն ընդլայնելով /եթե, օրինակ, նշվել է հայցի իրավական հիմքը, սակայն փաստերը լրիվ չեն նշվել /կամ նեղացնելով /եթե, օրինակ, ներկայացված որոշ փաստեր վերաբերելի չեն/: Նման դատավարական գործողության կատարմանը հայցը չի փոփոխվում /ինչպես որ դա համարում է Գ.Լ.Օսոկինան/։ Պարզապես, ենթելով վիճելի իրավահարաբերության քննության և կիրառման ենթակա նյութաիրավական նորմերից, ծցգրտվում է այն փաստերի շրջանակը, որոնք հայցվորի կողմից ներկայացված հայցի հիմքի և առարկայի քննության տեսանկյունից գործի լուծման համար ունեն էական նշանակություն:

Խնդրությունը առարկայի շրջանակներից դուրս գտնվող պահանջ լուծելու անհրաժեշտության դեպքում դատարանը պարտավոր է տվյալ գործով ապացուցման առարկայի մեջ մտցնել նաև այս փաստերը, որոնք, բնականաբար, չեն դրվել հայցի հիմքում, սակայն էական նշանակություն ունեն այդ պահանջի լուծման համար։ Դրանով

յալ առկա է նաև Լեռնային Ղարաբաղի Հանրապետության բարձրագույն դատական աստյանի պարզաբանումը:

Այսպես, մեկնարանելով ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի 372-րդ հոդվածը, համաձայն որի՝ եթե վճարման ենթակա տուժանքն ակնհայտորեն անհամաշափ է պարտավորության խախտման հետևանքներին, դատարանն իրավունք ունի պակասեցնել այն, ԼՂՀ Գերազույն դատարանն իր մի շաբթ որոշումներում ընդգծել է, որ թեև տուժանքի չափը նվազեցնելը դատարանի իրավունքն է, այդուհանդերձ, իրավունքի չարաշահումը կանխելու տեսանկյունից այն նաև դատարանի պարտականությունն է, քանի որ բոլոր դեպքերում խոսքը գնում է սահմանված տուժանքի չափի և պարտավորության խախտման հետևանքների միջև հավասարակշռության կամ ողջամիտ հարաբերակցության ապահովման մասին։ Յուրաքանչյուր դեպքում տուժանքը պակասեցնելիս դատարանն առաջին հերթին պետք է գնահատման առարկա դարձնի այն հարցը, թե պայմանագրով նախատեսված տուժանքը որքանո՞վ է անհամաշափ պարտավորության խախտման հետևանքներին /տե՛ս, օրինակ, ըստ հայցի «Արցախբանկ» փակ բաժնետիրական ընկերության ընդրեմ «ԿԱԿԱԴՈՒ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության, Գեղամ Քոչարյանի, Արմինե Ասծարյանի՝ 7.271.363,9 ՀՀ դրամը, հաշվեգրվելիք տոկոսները և տույժերը գանձելու, գրավադրված գույքի, իսկ վերջինիս անրավարարության դեպքում այլ գույքի վրա բռնագանձում տարածելու մասին ՀՀԴ Ն 2221/02/15թ. քաղաքացիական գործով ԼՂՀ Գերազույն դատարանի 08.07. 2016թ. որոշումը/։

Մեր կարծիքով՝ հայցի առարկայի շրջանակներից դուրս գտնվող պահանջ լուծելու անհրաժեշտության դեպքում դատարանը պարտավոր է տվյալ գործով ապացուցման առարկայի մեջ մտցնել նաև այս փաստերը, որոնք, բնականաբար, չեն դրվել հայցի հիմքում, սակայն էական նշանակություն ունեն այդ պահանջի լուծման համար։ Դրանով



հնարավորություն կտրվի կողմերին՝ ներկայացնելու համապատասխան ապացույցներ, որոնք ենթակա են հետազոտման և գնահատման օրենքով սահմանված կարգով: Այդ պահանջների պահպանմամբ կայացված վճռող կարող է միայն համապատասխանել վճռին ներկայացվող՝ ՔԴՕ 121, 121.1-րդ հոդվածներում սահմանված իմպերատիվ պահանջներին:

1. Դարչական դադարարությունում դադարանք կապված չէ հայդարարված պահանջների հիմքերով ու հիմնավորումներով. ՀՂՀ վարչական դադարարության օրենսգրքի 6-րդ հոդվածի համաձայն՝ գործի փաստերը վարչական դադարանք պարզում է ի պաշտոն/ ex officio/: Նոյն օրենսգրքի 86-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ կերպի համաձայն՝ դադարանք քննարկված փաստերի շրջանակը լրացնում է նաև այն փաստերով, որոնք, իր կարծիքով, էական են վեճի լուծման համար: Այսինքն՝ սպասցության ներակա փաստերի որոշումը լիվուրյան վերաբերում է դադարանքի պարագաներին:

2. Եթե Հայաստանի Հանրապետությունը 2001թ. հունվարի 25-ին վավերացնել է «Սարդու իրավունքների և հիմնարար ազարտությունների պաշտպանության մասին» նվորական ՀՀովի կոնվենցիան, որը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն է կազմուն, ապա Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը միջազգային փաստարդիքին միանալու հնարավորությունից ներկայուն գրկված է՝ դեռևս շանաշված լինելու պարագանով: Այնուանային, հանրապետության դադարանքները, որպես ժողովրդավարական պետության դադարանքներ, կազմադրվելուց հետո սկսել են կիրառել Եվրոպական կոնվենցիայի դրույթները: 2015 թվականի ապրիլի 15-ին Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Գերազույն դադարանք, Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Նախագահի ղեկավարությունը համապատասխան պահպանի կողմէի հիման վրա քննության առնելով Եվրոպական կոնվենցիայում ամրագրված դրույթների՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը, որոշել է, որ դրանք համապատասխանում են Սահմանադրությանը /ՀՂՀ Ազգային ժողովի կող-

մից օրենքունակել է 20.04.2015թ., ՀՂՀ Նախագահի կողմից վավերացվել 15.05.2015թ./:

3. « Զիան դադարարություն առանց հայցվորի», «Ոչ ոք չի կարող հարկադրվել հայց ներկայացնելու», « Դադարանք չի կարող դուրս գալ ներկայացնելու», « Դադարանք չի կարող դուրս գալ զարգացնելու», սամանական իրավունքում հոգության մեջ կեղող արքունական իրավունքում կարող դուրս գալ ներկայացնելու հայցի շրջանակներից»: Այսպիսի բարեկարգության մեջ մասշտաբներով առկա էնակ խորհրդային իրավունքում:

4. Ընդունակել է 24.02.2016թ.:

5. Վերոնշված և օրենքով նախարարեաված մնացած դեպքերի վերլուծությունից կարելի է հետևող անել որ օրենսդրով «Հայ դադարան կողմերի պահանջներից դուրս» սկզբունքից բացառությունը նախարարեական է որոշակի նախարարեական համար: Դրանք են՝ իրավահարաբերության ակնհայր բույլ կողմից շահերի պաշտպանությունը, բարեգայական պարագանական դադարանքի նախարարական գործառությունը:

6. *Տե՛ս Օսօկինա Գ.Լ. Գրայդանսկի պրոցես. Особенная часть. М.: Норма, 2007, № 235:*

7. «ՀՀ ՔԴՕ 130-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դադարանքի վճռող պետքը է լինի օրինական, հիմնավորված և պարագանական: ՀՀ Սահմանադրական դադարանքի որոշման կայացման ժամանակ այդ իրավադրույթը ունեցել է փոքր-ինչ այլ բռնադիրություն:

8. *Տե՛ս Сахнова Т.В. Курс гражданского процесса: теоретические начала и основные институты. М., «Волтер Клювер», 2008, 383, 384 էջերը: Վ. Եսայան, «Հայցի հիմքի փոփոխման հիմնախնդիրը բարեգայական դադարանքի ժշխանություն», «Դադարանք իշխանություն», հոկտեմբեր-նոյեմբեր, 2014, էջ 73:*